ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԻԱՐ ԼԾԱԿՆԵՐԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ԼՈՒԾԵԼԻՍ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՎԱՀԵ

Երևանի պետական համալսարան

Էլ. հասցե՝ vahe.zargaryan@gmail.com

DOI: 10.24234/scientific.v1i46.133

ԱՄՓՈՓՈՒՄ

Եվրոպական միությունը՝ համայնք, որը բաղկացած է 27 անդամ երկրներից՝ միմյանցից մեծապես տարբեր պատմությամբ, մշակույթով, տնտեսությամբ և զարգացման մակարդակով, կարիք ունեն խաղի որոշակի հստակ կանոնների, որոնք կապահովեն մեկ ինտեգրացիոն հարկի տակ հավաքված պետությունների խաղաղ գոյակցությունն ու համակեցության շարունակականությունը:

Սույն հոդվածը կենտրոնանում է ԵՄ-ում սուբսիդիարության սկզբունքի և հակամարտությունների կառավարման գործում վերջինիս ունեցած դերի վրա:

Հոդվածի նպատակն է տրամադրել համապարփակ պատկերացում, թե ինչպես է սուբսիդիարությունը հանդես գալիս որպես լարվածությունը մեղմելու և ԵՄ անդամ երկրների միջև համագործակցությունը խթանելու մեխանիզմ: Միաժամանակ նաև բացահայտելու, թե որքանով է սուբսիդիարությունը գործում որպես միասնականության ցուցիչ և գնահատելու դրա արդյունավետությունը հակամարտությունների կարգավորման գործում:

Վերլուծությունը կենտրոնացած է տարբեր քաղաքական համատեքստերում սկզբունքի պատմական կիրառման վրա՝ միտված բացահայտելու օրինաչափություններն ու ընդհանուր միտումները:

Հոդվածի մեթոդաբանական մոտեցումը հիմնված է ԵՄ մակարդակով քաղաքական որոշումների կայացման գործընթացների համապարփակ վերլուծության վրա՝ հաշվի առնելով սուբսիդիարության սկզբունքը: Համադրելով որակական և քանակական հետազոտության մեթոդները՝ համակարգված կերպով ուսումնասիրվում են սկզբունքի ազդեցությունները հակամարտությունների բացահայտման, կանխարգելման և լուծման վրա:

Հիմնավորվել է, որ ԵՄ-ում սուբսիդիարության սկզբունքի նպատակային և արդյունավետ իրականացումը կարող է էական ներդրում ունենալ հակամարտությունների կանխարգելման և լուծման գործում:

Արդյունքում սուբսիդիարության սկզբունքը հանդես է գալիս որպես ԵՄ-ում տարաձայնությունների կառավարման հիմնական գործիք՝ իր ունեցած կենտրոնական դերով: Հետազոտությունն ընդգծում է այս սկզբունքի ճշգրիտ իրականացման

հրատապությունը ազգային և համայնքային շահերի դինամիկան հաջողությամբ ներդաշնակեցնելու նպատակով:

Բանալի բառեր՝ Եվրամիություն, ԵՄ, ինտեգրացիա, սուբսիդիարություն, սուբսիդիարության սկզբունք, սուբսիդիար օգնություն, ինքնօգնություն, լրացուցչություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրամիությունը (ԵՄ) իր ստեղծման օրվանից հանդես է գալիս որպես տարածաշրջանային ինտեգրման չափանիշ՝ հիմնված իր անդամ երկրների միջև համագործակցության, ընդհանուր արժեքների և փոխադարձ աջակցության սկզբունքների վրա: Ստեղծման առաջին իսկ պահից ԵՄ-ն անցնում է կազմավորման ու ինքակատարելագործման բարդ ճանապարհ՝ ձգտելով ներդաշնակեցնել առանձին ազգերի շահերը՝ միաժամանակ առաջ մղելով հավաքական, համընդհանուր բարիքի ստեղծման կարևորությունը: Այս հավասարակշռող քայլերի հիմքում ընկած է սուբսիդիարության սկզբունքը, որն ամրագրված է Եվրոպական միության մասին պայմանագրում: Եթե մեկ նախադասության նկարագրելու լինենք այս սկզբունքի էությունը, ապա ցանկացած որոշում պետք է ընդունվի հնարավորինս տեղական մակարդակում, իսկ իշխանության բարձր մակարդակները միջամտում են միայն այն դեպքում, երբ առաջ է գալիս անխուսափելի անհրաժեշտություն: Սուբսիդիարությունը ԵՄ վարած ներքին քաղաքականության անկյունաքարն է՝ մշտապես ուշադրության տակ պահելով վերազգայնության և ազգային ինքնավարության միջև եղած նուրբ սահմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՄ-ն բախվում է բազմաթիվ մարտահրավերների, ներառյալ քաղաքական լարվածությունը, տնտեսական անհավասարությունները և անդամ երկրների միջև մշակութային տարբերությունները: Որպես արդյունք՝ շատ կարևոր է մշակել մեխանիզմներ, որոնք կօգնեն լուծել հակամարտությունները և ամրապնդել միասնականության և համերաշխության զգացումը Միության ներսում: Հենց այստեղ են գործում ԵՄ-ի օժանդակ լծակները:

Սուբսիդիարության սկզբունքը, որը սահմանում է, որ որոշումները պետք է ընդունվեն շահագրգիռ քաղաքացիներին ամենամոտ մակարդակով, ապահովում է հակամարտությունների արդյունավետ լուծման շրջանակ: Խթանելով քաղաքացիների և տեղական համայնքների մասնակցությունը՝ այն նպաստում է ժողովրդավարական լեգիտիմության ամրապնդմանը և հակամարտությունների լուծմանը:

Սուբսիդիարության սկզբունքը բացառիկ հնարավորություն է տալիս խթանելու քաղաքական կրթությունը և ժողովրդավարական մասնակցությունը: Հնարավորություն տալով քաղաքացիներին մասնակցել տեղական և ազգային մակարդակներում որոշումների կայացման գործընթացներին, այն օգնում է ամրապնդել նրանց վստահությունը քաղաքական ինստիտուտների նկատմամբ և խթանում է սեփականության և մասնակցության զգացումը: Կրթական ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով սուբսիդիարության սկզբունքը կարող է օգնել բարձրացնել տեղական

ինքնակառավարման, քաղաքացիական ներգրավվածության և ժողովրդավարական մասնակցության կարևորության գիտակցումը:

Ընդհանուր առմամբ, մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ սուբսիդիարության սկզբունքը ոչ միայն կարևոր իրավական և քաղաքական գործիք է ԵՄ-ի ներսում հակամարտությունների կարգավորման համար, այլև կարող է կատարել կարևոր կրթական գործառույթ: Օգնելով խթանել քաղաքացիական կրթությունը, քաղաքացիական ներգրավվածությունը և հասկանալ, թե ինչպես է աշխատում ԵՄ-ն, այն կարող է օգնել ավելի ակտիվ, տեղեկացված և ժողովրդավարական եվրոպական հասարակության կառուցմանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սուբսիդիարության սկզբունքի փիլիսոփայական ակունքները հասնում են մինչև միջնադար՝ մինչև Թովմա Աքվինացու կողմից Արիստոտելի քաղաքական փիլիսոփայության աստվածաբանական մեկնաբանություն և միջնադարյան Եվրոպայի ինստիտուցիոնալ բազմակարծության ձևավորում: Շարունակելով Արիստոտելի գաղափարախոսու-թյունը՝Աքվինացին գրում է, որ մարդկային հասարակությունները ձևավորվում են ընտանիքներից՝ գյուղերից հասնելով մինչև ամբողջ քաղաք-պետություններ, բայց միևնույն ժամանակ նաև փաստում, որ Արիստոտելի ասածը չի սահմանափակվում միայն քաղաք-պետություններով, այլ վերաբերում է նույնիսկ ավելի ընդգրկուն քաղաքական համայնքների՝ ներառելով գավառներ, թագավորություններ, հասնելով գուցե նույնիսկ կայսրությունների մասշտաբների (Finnis, 2016) :

Անդրադառնալով իրեն շրջապատող հասարակության բարդ կառուցվածքին՝ Աքվինացին սահմանում է բազմաթիվ և բազմազան նպատակներ, որոնց համար գոյություն ունեն և որոնց համար ձևավորվում են մարդկային համայնքի տարբեր ասոցիացիաներ և ձևեր՝ առաջացնելով ընտանեկան, աշխարհագրական, մասնագիտական, առևտրական, գիտական և այլնի մի ամբողջ կուռ համակարգ: Ըստ Աքվինացու՝ այս բոլոր խմբերն ու խմբավորումները՝ ամենափոքրից մինչև ամենամեծը, ունեն իրենց տեղը և իրենց յուրահատուկ գործառույթը, և յուրաքանչյուրին պետք է թույլ տրվի իր ուրույն և հատուկ ներդրումն ունենալ համայնքի ընդհանուր գործունեության մեջ (Pesch, 2015) :

«Սուբսիդիարության սկզբունք» եզրույթը Գուստավ Գունդլախի և Պիոս XI պապի կողմից սահմանվում է «Quadragesimo anno» շրջաբերականի մեջ հետևյալ բովանդակությամբ.

«Դա այն է, երբ անհատից չես կարող վերցնել սեփական նախաձեռնությամբ և սեփական ուժերով ստեղծածն ու այն հայտարարել որպես կորպորատիվ գործունեության արդյունք, քանի որ դա դեմ է արդարության տրամաբանությանը. դա կարող են իրենց թույլ տալ, օրինակ, ավելի փոքր կամ միմյանցից կախում ունեցող համայնքները, ինչը միտված է ավելի մեծ և գերակա դիրք ունեցող համայնքների համար նախընտրելի արդյունքի ապահովմանը: Միաժամանակ սա ունի նաև իր բացասական կողմերը և հանդես է գալիս որպես հասրակական կարգի հակոտնյա:

Ցանկացած սոցիալական գործունեություն, իհարկե, իր բնույթով և հայեցակարգով սուբսիդիար է. այն պետք է նեցուկ լինի սոցիումի անդամներին, սակայն ոչ մի պարագայում չպետք է վնասի կամ կլանի նրանց» (Xiii & Xi, 1931) :

Ծնունդ առնելով դեռևս պատմական վաղ անցյալից՝ սկզբունքն իր ինտերպրետացիոն արձագանքն է գտել պատմության ժամանակային գրեթե բոլոր հատույթներում, որի միջոցով այն հետզհետե սկսել է ավելի ընդլայնվել ու ներառել հասարակարգի այլ ասպեկտներ ևս: Ռենե Մարչիչը, անդրադառնալով սուբսիդիարության սկզբունքին, գրում է, որ այս սկզբունքն ինքնին «այնքան հին է, որքան արևմտյան իրավական միտքը» (Marcic, 1957b):

ԱՄՆ 16-րդ նախագահ Աբրահամ Լինքոլնը, անդրադառնալով սուբսիդիարության սկզբունքին, այն մեկնաբանում է հետևյալ կերպ. «Կառավարությունը պետք է բնակչությանն ապահովի ամեն ինչով, ինչի պահանջը որ կունենա նա, սակայն դա վերաբերում է այն պարագաներին, երբ ժողովուրդը կամ ինքը՝պետությունը, ի զորու չէ ինքնուրույն դա անելու կամ անելու պարագայում էլ՝ ոչ բավարար կերպով: Մնացյալ բոլոր դեպքերում, երբ ժողովուրդն ի զորու է լուծելու ծառացած խնդիրները, պետք է բացառվի պետության անհարկի միջամտությունը» (Lincoln, 1953) :

Օտտո ֆոն Գիրկեն իր գրվածքներում փորձ էր անում ներկայացնելու հասարակության աստիճանական կառուցվածքը գերմանական իրավական զարգացումների համատեքստում՝ ուշադրություն հրավիրելով այն վտանգների վրա, որոնք կարող են սպառնալ ազատությանը, եթե «պետական խնամակալությունը» ստանձնի պատասխանատվություն այն հարցերի համար, որոնց լուծումը տեղավորվում է ներպետական համայնքների հնարավորությունների շրջանակներում: «Սա, իհարկե, վերացնում է կոոպերատիվ ասոցիացիաների ինքնավարությունն ու ինքնակառավարումը՝ միաժամանակ նվազեցնելով նաև իրավասությունների շրջանակը» (Gierke, 1868) :

Եթե ինտեգրացիայի ընթացքում առաջանում են հարցեր, ապա չկա անհրաժեշտություն, որ վերազգային կառույցն անմիջապես միջամտի խնդրո առարկայի ու հարցի պարզաբանմանը, քանի որ հնարավոր է, որ այն տեղական մակարդակում էլ կարող է լուծվել:

Սուբսիդիարության սկզբունքի հասարակական-քաղաքական դրսևորումները

Սուբսիդիարության սկզբունքը հետևողական կերպով իր լիիրավ տեղն է գրավել ԵՄ հիմնադիր ակտերում: Առանց իր այսօրեական անվանման ու բնութագրականների, սուբսիդիարության սկզբունքը առաջին անգամ նորմատիվ դրսևորում է ստացել Հռոմի պայմանագրի (1957) 130-րդ հոդվածով բնապահպանական հարաբերությունների համատեքստում: Այս հոդվածը, որն այնուհետ ընդունվեց Եվրոպական միասնական ակտով (1986), ներկայացնում էր Համայնքի և նրա անդամ պետությունների գործողությունների ընդհանրական արդյունավետությունը՝ նախատեսված բնապահպանական նպատակներին հասնելու համար և «այն հիմնադրույթի առավել մշակված տարբերակն է, համաձայն որի Համայնքի օրենսդրությունը պետք է համապատասխանի Հռոմի պայմանագրի 235-րդ հոդվածին»: Ըստ Ժ. Դելորի, որն այդ ժամանակ ղեկավարում էր ԵՄ հանձնաժողովը, «շրջակա միջավայրի պաշտպանության

մասին Եվրոպական միասնական ակտի տեքստը ... այն պարբերությունն է, որը, անկասկած, կընդունվի բոլորի կողմից միաձայն» (Golub, 1996): Սա սուբսիդիարության ամրապնդման ուղղությամբ առաջին կարևոր քայլն էր՝ որպես ԵՄ իրավասությունների իրականացման հիմնարար սկզբունք:

Սուբսիդիարության իրավական զարգացման երկրորդ կարևոր քայլը Մաաստրիխտի պայմանագրի ընդունումն էր, որի ուժի մեջ մտնելուց հետո այս սկզբունքը տարածվեց հարաբերությունների բոլոր ոլորտների վրա, որոնք չեն մտնում ԵՄ բացառիկ իրավասության մեջ: Այստեղ դրույթներն արդեն չէին սահմանափակվում միայն բնապահպանական հարցերով: Մաաստրիխտի պայմանագրով սուբսիդիարության սկզբունքը վերցվեց դատական պաշտպանության տակ, սակայն ոչինչ չասվեց սկզբունքի մինչդատական ընթացակարգերի և դրանցով պայմանավորված հետագա հարցերի վերաբերյալ: Այս բացը մեծ մասամբ լրացվեց Ամստերդամի պայմանագրով, որի հավելվածներից մեկը հղում էր կատարում սուբսիդիարության և համաչափության սկզբունքների կիրառման մասին արձանագրությանը, որի շրջանակներում մանրամասնորեն նկարագրվում են սուբսիդիարության սկզբունքի կիրառման չափանիշները և դրա պահպանման ընթացակարգերը ԵՄ օրենսդրական գործընթացում: Դրանք կոչվում են նաև Ամստերդամի «գործառնական չափանիշներ» և ներառում են երեք ասպեկտ՝ ազգային միջոցների բացակայություն, համեմատական վերազգային արդյունավետություն և խնդրի անդրազգայինություն:

Սուբսիդիարության սկզբունքի կիրառման հիմնական մարմինը ԵՄ հանձնաժողովն էր՝ որպես ԵՄ ինստիտուտ, որը հեղինակել է ամենամեծ թվով օրենքների նախագծեր: Ինտեգրացիոն հարաբերությունների կարգավորման մասին ԵՄ օրենքների նախագծերի նախապատրաստման ժամանակ (չի մտնում ԵՄ բացառիկ իրավասությունների մեջ) նրան վստահվում է «խորհրդակցությունների, հիմավորումների, տեղեկատվության տրամադրման և հրապարակումների» իրականացման իրավասություն: Միևնույն ժամանակ, Ամստերդամի պայմանագիրը ոչինչ չի սահմանում սուբսիդիարության սկզբունքի կիրառման գործում ԵՄ Արդարադատության դատարանի դերի վերաբերյալ, հավանաբար այն պատճառով, որ այն ավելորդ կլիներ նորույթի տեսանկյունից:

Ելնելով Լիսաբոնյան պայմանագրի հետ ընդունված «Սուբսիդիարության և համաչափության սկզբունքների կիրառման մասին Արձանագրությունից» (Protokoll, Nr. 2)՝ ԵՄ-ում ստեղծվում է այսպես կոչված սուբսիդիար վերահսկողության մեխանիզմ՝ ԵՄ օրենսդրական ակտերի նախագծերում սուբսիդիարության սկզբունքի պահպանման նկատմամբ նախնական (օրենսդրական գործընթացի ընթացքում) վերահսկողության իրականացման նպատակով: Այս վերահսկողությունը վերապահվում է ազգային խորհրդարաններին, որոնք առաջին անգամ, հիմնարար մակարդակով ներգրավվում են ԵՄ օրենսդրական գործընթացին և ինչպես բնորոշում է Ի. Կուպերը, հանդես են գալիս որպես սուբսիդիարության «պահապան շներ» (Cooper, 2006b): Ըստ ամենայնի, մի կողմից գոհ չլինելով օրինագծերի պատրաստման և ընդունման ընթացքում ԵՄ կառույցների կողմից իրականացվող ինքնավերահսկման արդյունքներից, մյուս կողմից մեծ հույսեր չկապելով դատական վերահսկողությամբ ԵՄ կառույցների գործողություններում

սուբսիդիարության սկզբունքի պահպանման հետ, Լիսաբոնի պայմանագրի հեղինակները որոշեցին դիմել ազգային խորհրդարաններին՝ որպես վերազգային ինտեգրման դերակատարների, որոնք առավել քան որևէ մեկը կարող էին «գիտակցել իրավասությունների որոշակի շրջանակ ԵՄ վերազգային մակարդակին փոխանցելու արժեքը» (Fabbrini, 2016) :

Սուբսիդիարության սկզբունքը բնորոշ օրինակ է այն բանի, որ եվրոպական իրավական պատմության ընթացքում ԵՄ օրենսդրության մեջ ներդրվել է մի գործիք, որը պետք է ներդաշնակ հավասարակշռություն ստեղծի մի կողմից անդամ պետությունների շահերի, իսկ մյուս կողմից՝ ԵՄ-ի վերազգային կազմակերպության շահերի միջև:

Վալտեր Ազամը իր «Սուբսիդիարությունն ինքնօգնության միջոցով» աշխատության մեջ, անդրադարձ կատարելով սուբսիդիարության սկզբունքի առանձնահատկություններին, նշում է, որ սոցիալական աշխատանքի պրակտիկ կիրառման տեսանկյունից կոոպերատիվ, սուբսիդիար գործելաոճը անօտարելի է ինքնօգնության բնույթից (Asam & Heck, 1985): Սուբսիդիարությունը՝ որպես աշխատանքի համայնքային և սոցիալական բաժանման ընդհանուր սկզբունք, նախատեսված է քաղաքացիների այն շրջանակների համար, որոնք կենտրոնացած են սեփական իրավունքների ինքնուրույն իրացման, ինչպես նաև ինքնազարգացման ասպեկտների վրա և առավել բարձր դիրքերից ստացվող օգնությանը մոտենում են ոչ թե որպես տրամադրվող բարիքի կրավորական սպառողի դիրքերից, այլ դրա մեջ տեսնում են զարգացման հնարավորություն:

Ինքնօգնությունը պահանջում է գործելու, կազմակերպելու և որոշումներ կայացնելու որոշակի ռեսուրսներ, միաժամանակ նաև գիտելիքների բազա՝ ինքնօգնության առաջարկը հնարավորության վերածելու համար: Սոցիալական ինքնօգնության թիրախ հանդիսացող խմբերում ինքնօգնությունն ու սոցիալական ներգրավվածությունը զուգորդվում են բովանդակային տեսանկյունից. նրանց գործունեության թիրախ են, առաջին հերթին, հասարակական կյանքի և աշխատանքի իրականացման ոլորտները, հանգիստը, կրթությունը և մշակույթը, անապահով խավը և խտրական վերաբերմունք ստացող սոցիալական խմբերը, հաշմանդամներն ու հիվանդները:

Սուբսիդիարությունն ինքնին իրենից ենթադրում է կառավարման համակարգի հնարավորինս ներառականություն, երբ որոշումների կայացման հարցում հաշվի են առնվում բոլոր կողմերի տեսակտները, իսկ երբ խնդրո առարկան շարունակում է մնալ անլուծելիության տրամաբանության մեջ, ապա քննարկումների ու որոշումներ կայացնելու գործընթացում ներգրավվում են նաև առավել բարձր մակարդակի կառույցները: Սակայն այդ ներգրավվածությունն իրենից ենթադրում է ինքնօգնության առաջարկ, ոչ անմիջական ներգրավվածություն ու հնարավորության տրամադրում առավել ցածր, ժողովրդին ավելի մոտ համակարգերին: Սրանով պայմանավորված, թեև ինտեգրացիոն կառույցի շրջանակներում համագործակցության թելերով միմյանց կապված անդամները իրենց սեփական ինքնիշխանությունից պատվիրակում են վերազգային կառույցին, բայց դրանով հանդերձ ձեռք են բերում նաև գործողությունների որոշակի առավել լայն շրջանակ, երբ կայացվող որոշումը ուղիղ կամ անուղղակի կերպով առնչվում է իրենց հետ:

Եվրոպական վերափոխման և ինտեգրացիոն գործընթացների շրջանակներում նկատվում է միտում, երբ գնալով մեծանում է ռեգիոնալիզմի ուժն ու ռազմատենչությունը: Այս ամենի ունեցած հնարավոր վնասներից խուսափելու համար ինտեգրացիոն կառույցներն անցնում են դեպի քաղաքական ապակենտրոնացում և տարածաշրջանային ինքնավարություն: Կոնֆլիկտային ժայթքումներից խուսափելու համար ավելի քան խելամիտ է կողմնորոշվելը դեպի սուբսիդիարության սկզբունք և մնալ հավատարիմ վերջինիս սահմանած նորմերին:

Սուբսիդիարության սկզբունքի նպատակային և բովանդակային կողմերը

Սուբսիդիարության սկզբունքը պետական և հասարակարգի կառուցվածքային սկզբունք է, որը պարտավորեցնում է պետությանը գործելու՝ միաժամանակ սահմանելով նաև ինքնազսպման որոշակի հայեցակարգեր: Պետությունը ստանում է պարտավորություն (նաև իրավունք) օգնություն ցուցաբերել փոքր և ենթակա ստորաբաժանումներին (պետություններ, համայնքներ, ինքնակառավարման մարմիններ)՝ միտված անհատ քաղաքացիներին և/կամ ընտանիքներին, բայց այսքանով հանդերձ արգելվում է պետությանը ներգրավվել վերջիններիս ներքին գործերին, եթե դրանք ինքնուրույն էլ կարող են լուծվել: Հակառակ դեպքում, երբ օրինակ սոցիալական խմբի կամ պետության ներուժը չի բավականացնում ծառացած խնդիրների լուծմանը, ապա սուբսիդիարության սկզբունքը պարտավորեցնում է պետությանը ոչ թե անմիջապես ստանձնել այդ խնդիրները, այլ փնտրել, առաջարկել ինքնօգնության ուժեղացման պայմաններ: Այսքանով սուբսիդիարության սկզբունքը իրենից ենթադրում է ոչ միայն դրական, պետությանն ակտիվացնող գործառույթ, այլ նաև բացասական, երբ նրան կարող է վերապահվել գերիշխող դիրք:

Սուբսիդիարության սկզբունքի հիմնական նպատակներից մեկը անդամ պետությունների և վերազգային կառույցի միջև իրավասությունների տարաբնույթ շրջանակների համատեքստում փոխհարաբերությունների հստակ կանոնների ստեղծումն է: Այդ իսկ պատճառով էլ այն անկյունաքարային նշանակություն ունի Եվրոպական Միության գործունեության մեջ, հատկապես, երբ կայացվող որոշումները վերաբերում են անդամ բոլոր պետություններին:

Դրանից զատ, հիմնական մտադրություններից մեկն էլ այն է, որ պաշտպանվի անդամ երկրների որոշումներ կայացնելու և գործելու ազատությունն ու իրավունքը: Սրան հասնելու համար ինտեգրացիոն կառույցի տարածքում հնարավոր է դառնում լոկալ մակարդակով մասնակցություն ցուցաբերել քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացին, ինչն էլ բացառում է այն մտայնությունը, թե բոլոր որոշումները կայացվում են մեկ տեղում:

Որպես սոցիալական և քաղաքական կազմակերպչական և նախագծային սկզբունք՝ սուբսիդիարության գաղափարը հանդես է գալիս որպես կառուցվածքային սկզբունք երեք տարբեր հարթություններում.

1. որպես ինստիտուցիոնալ կառուցվածքային սկզբունք՝ բազմաշերտ պետական և հասարակական կառույց ստեղծելու կոչով, (օրինակ՝ կոլեկտիվ բանակցությունների ինքնավարության տրամադրման կամ պետության դաշնայնացման տեսքով),

2. որպես մասնավոր և պետական խնդիրների և բազմաշերտ պետության մակարդակների հարաբերությունները կարգավորելու իրավասությունների բաշխման սկզբունք,
3. որպես առանձին որոշումներ կայացնող ստորաբաժանումների կողմից հանձնարարված սոցիալական խնդիրների կատարման կարգը կարգավորելու իրավասության իրականացման սկզբունք (Pieper, 1993):

Գործողությունների իրականացման շրջանակներում սկզբունքն իր հերթին որոշումներ կայացնողների համար սահմանում է որոշակի վարքագծի կանոններ, որոնց պետք է հետևել: Այս կետով սահմանվում են գործողությունների իրականացման բոլոր այն կետերը, որտեղ վերազգային կառույցը իրավունք է ստանում միջամտելու: Սակայն այս միջամտությունն իրենից պետք է ենթադրի ոչ թե երևան եկած խնդրի անմիջական լուծում, այլ ինքնօգնության առաջարկ կողմերին, որոնք ակտիվ հանդես են գալու՝ իրենց ուժն ու ռեսուրսներն ուղղելով խնդրի լուծմանը:

Սուբսիդիարության սկզբունքի ազդեցության տիրույթը ու վերահսկման տեսակները

ԵՄ շրջանակներում սուբսիդիարության սկզբունքը կիրառվում է այն ոլորտներում, որոնք չեն մտնում առանձին անդամ պետությունների կամ Եվրամիության բացառիկ իրավասությունների մեջ: Լիսաբոնի պայմանագիրը սահմանում և սահմանազատում է Միությանը վերապահված իրավասությունները, որոնք որ կարող են իրացվել լոկալ մակարդակում: Սուբսիդիարության սկզբունքը կարևոր է Եվրոպական միության բոլոր անդամների համար, և նրանք պետք է առաջնորդվեն դրանով: Այնուամենայնիվ, սուբսիդիարության սկզբունքն իր հիմնական գործնական կիրառական ոլորտը գտնում է օրենսդրական ընթացակարգերի մեջ: Հենց այս ոլորտում է, որ Լիսաբոնի պայմանագիրը ամրապնդեց ազգային խորհրդարանների և Գերագույն դատարանի համապատասխան դերերը, երբ խոսքը այս կամ այն որոշման հետ սուբսիդիարության սկզբունքի համապատասխանության մասին է: Նույն պայմանագրով ընդլայնվեց նաև տարածաշրջանային կոմիտեներին վերապահված գործունեության ընդգրկույթն ու օրենսդրական լիազորությունների շրջանակը:

Սուբսիդիարության սկզբունքի վրա հիմնված վերահսկողության այս համակարգը իրականացվում է երկու փուլով և նախատեսում է ինչպես կանխարգելիչ, այնպես էլ հետագա դատական ռեպրեսիվ վերահսկողություն:

Սուբսիդիարության սկզբունքի կանխարգելիչ վերահսկողությանն են վերաբերում Եվրամիության մասին պայմանագրի 5-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի (*EU-Vertrag,* «Die Organe Der Union Wenden Das Subsidiaritätsprinzip Nach Dem Protokoll Über Die Anwendung Der Grundsätze Der Subsidiarität Und Der Verhältnismäßigkeit an. Die Nationalen Parlamente Achten Auf Die Einhaltung Des Subsidiaritätsprinzips Nach Dem in Jenem Protokoll Vorgesehenen Verfahren», n.d.) և 12-րդ հոդվածի Բ կետի դրույթները ((Die Nationalen Parlamente Tragen Aktiv Zur Guten Arbeitsweise Der Union Bei, Indem Sie. . . (B) Dafür Sorgen, Dass Der Grundsatz Der Subsidiarität Gemäß Den in Dem Protokoll Über Die

Anwendung Der Grundsätze Der Subsidiarität Und Der Verhältnismäßigkeit Vorgesehenen Verfahren Beachtet Wird, n.d.):

Այս կետերի ու ենթակետերի իրականացումը ազգային խորհրդարանների պարագայում իրականացվում է N 2 արձանագրությամբ նախատեսված ընթացակարգին (սուբսիդիար հանդիմանանք) համապատասխան: Սա իրենից ենթադրում է, որ կանխարգելիչ վերահսկողության սահմաններում ազգային խորհրդարանները կարող են օրենսդրական ակտի նախագիծը հաստատման ներկայացնելուց հետո ութ շաբաթվա ընթացքում պատճառաբանված եզրակացությամբ հայտ ներկայացնել Եվրոպական խորհրդարանի, խորհրդի և հանձնաժողովի նախագահներին, բացատրությամբ, թե ինչն է պատճառը, որ նախագիծը համարում են անհամատեղելի սուբսիդիարության սկզբունքի հետ: Եթե որոշվում է, որ օրենդրական առաջարկը չի համապատասխանում սուբսիդիարության սկզբունքի տրամաբանությանը, ապա այն կարող է մերժվել խորհրդի անդամների ձայների 55%-ի կամ Եվրախորհրդարանում տրված ձայների մեծամասնության ուժով: Գերմանիայից, օրինակ, ԵՄ-ին ուղղված հայտարարությունները կատարվում են Բունդեսթագի կամ Բունդեսրատի միջոցով:

Սուբսիդիարության սկզբունքը կանխարգելիչ վերահսկողությունից զատ օժտված է նաև ռեպրեսիվ վերահսկողությամբ, որը գործադրվում է այն պարագայում, երբ կանխարգելիչ միջամտությունը, սուբսիդիարության սկզբունքի կիրառելության հարցում չի հանգեցնում ցանկալի արդյունքի, կամ եթե վերահսկողությունը հնարավոր է միայն օրենսդրական ընթացակարգից հետո: Եվ այս պարագայում սուբսիդիարության սկզբունքի համապատասխանությունը կարող է ստուգվել նաև ճնշող վերահսկողության համատեքստում՝ հայց ներկայացնելով մինչև Եվրոպական միության Արդարադատության դատարան:

Այս առումով, յուրաքանչյուր անդամ պետություն անհրաժեշտության դեպքում, իր իրավական համակարգին համապատասխան, ազգային խորհրդարանի կամ խորհրդարանի պալատի անունից կարող է ներկայացնել համապատասխան բողոք: Տարածաշրջանների կոմիտեն կարող է բողոքարկել նաև այն իրավական ակտերը, որոնց ընդունման համար Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրը նախատեսում է համապատասխան խորհրդակցություն: Այնուամենայնիվ, Միության ինստիտուտները այս սկզբունքի կիրառման հայեցողության շրջանակներում գործունեության լայն հնարավորություններ են ստանում: Եվրոպական դատարանը հստակ նշում է, որ սուբսիդիարության սկզբունքին համապատասխանելը այն հրամայականն է, որը պետք է հիմնավորված լինի Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 296-րդ հոդվածով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անկյունաքարային նշանակություն ունի սուբսիդիարության սկզբունքը Եվրոպական Միությունում տարածայնությունների և հակամարտությունների կառավարման համատեքստում: Պատմական զարգացումների, քաղաքական որոշումների կայացման գործընթացների և իրավական շրջանակների համապարփակ վերլուծության միջոցով

պարզ դարձավ, որ այս սկզբունքի ճշգրիտ իրականացումը կարող է վճռորոշ ներդրում ունենալ հակամարտությունների կանխարգելման և լուծման գործում: Հետազոտությունն ընդգծում է, որ ԵՄ մակարդակով որոշումներ կայացնող ապակենտրոնացված կառույցների դիտարկումը հնարավորություն է տալիս արդյունավետ բացահայտել հակամարտությունների ներուժը և տարածք է ստեղծում հատուկ լուծումների համար: Բացահայտված լավագույն փորձը ոչ միայն գործնական պատկերացումներ է տալիս, այլ նաև ապագայի կոնկրետ ելակետեր՝ ԵՄ-ում համախմբվածությունն ու կայունությունը ամրապնդելու համար:

Դարաշրջան, որը նշանավորվում է գնալով առավել աճող բարդությամբ ու փախկապակցվածություններով, առաջնային է դառնում ԵՄ-ի համար ևս հնարավոր բոլոր կոնֆլիկտները նախ սաղմնային փուլում հայտնաբերելու և գործուն քայլերով վերջիններիս հաղթահարելու առաջնահերթությունը: Այս համատեքստում սուբսիդիարությունն ապահովում է սկզբունքային մոտեցում, որի միջոցով առաջին հերթին հարգվում է անդամ երկրների ինքնիշխանությունը: Ահա այս կերպով է ձևավորվում ԵՄ-ի ներսում ծառացած կոնֆլիկտների կարգավորման լանդշաֆտը՝ ի ցույց դնելով այս սկզբունքի ներուժը միասնությունը խթանելու և եվրոպական ինտեգրման կայուն հաջողությունն ապահովելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Asam, W.H., & Heck, M. (1985). *Subsidiarität und Selbsthilfe*, S. 28

Cooper, I. (2006). The watchdogs of subsidiarity: national parliaments and the logic of arguing in the EU*. JCMS: Journal of Common Market Studies, 44(2), 281–304. https://doi.org/10.1111/j.1468-5965.2006.00623.x, P 283

Fabbrini, F. (2016) The Principle of Subsidiarity. Takis Tridimas & Robert Schütze (eds.), Oxford Principles of EU Law (OUP 2016), Forthcoming, iCourts Working Paper Series No. 66, Available at SSRN: https://ssrn.com/abstract=2781845 or http://dx.doi.org/10.2139/ssrn.2781845, P. 291

Finnis, J. (2016). Subsidiarity's Roots and History: Some observations. *The American Journal of Jurisprudence*, *61*(1), 133–141. https://doi.org/10.1093/ajj/auw006, P. 135

Golub, J. E. (1996). Sovereignty and subsidiarity in EU environmental policy. Political Studies, 44(4), 686–703. https://doi.org/10.1111/j.1467-9248.1996.tb01749.x, P. 690

Lincoln, A., Basler, R. P., Pratt, M. D., & Dunlap, L. A. (1953). The collected works of Abraham Lincoln. The American Historical Review, 59(1), 142. https://doi.org/10.2307/1844696, P. 221

Marcic, R. (1957b). Vom Gesetzesstaat zum Richterstaat. https://doi.org/10.1007/978-3-7091-7871-3, S. 431

Pesch, O. H. (2015). Heinzmann, Richard: Thomas von Aquin: eine Einführung in sein Denken. - Stuttgart u.a.: Kohlhammer, 1994. *Münchener Theologische Zeitschrift*, 47(2), 194–195. https://doi.org/10.5282/mthz/3932, S. 194

Pieper, S. U. (1993). Subsidiaritätsprinzip–Strukturprinzip der Europäischen Union. Deutsches Verwaltungsblatt, 108(13), 705-712. S. 705

Von Gierke, O. F. (1868). Rechtsgeschichte der deutschen Genossenschaft. https://ci.nii.ac.jp/ncid/BA10221677, S. 644

Xiii, P. L., & Xi, P. P. (1931). Die Enzyklika Leos XIII. "Rerum novarum" über die Arbeiterfrage und Enzyklika Pius XI. "Quadragesimo anno" über die gesellschaftliche Ordnung, ihre Wiederherstellung und ihre Vollendung nach dem Heilsplan der Frobotschaft zum 40. Jahrestag des Rundschreiben Leos XIII. "Rerum novarum." http://ci.nii.ac.jp/ncid/BA79439555, S. 21

***Die nationalen Parlamente tragen aktiv zur guten Arbeitsweise der Union bei, indem sie**. . . (b) dafür sorgen, dass der Grundsatz der Subsidiarität gemäß den in dem Protokoll über die Anwendung der Grundsätze der Subsidiarität und der Verhältnismäßigkeit vorgesehenen Verfahren beachtet wird.* (n.d.). https://dejure.org/gesetze/EU/12.html

***EU-Vertrag**, «Die Organe der Union wenden das Subsidiaritätsprinzip nach dem Protokoll über die Anwendung der Grundsätze der Subsidiarität und der Verhältnismäßigkeit an. Die nationalen Parlamente achten auf die Einhaltung des Subsidiaritätsprinzips nach dem in jenem Protokoll vorgesehenen Verfahren».* (n.d.). https://dejure.org/gesetze/EU/5.html

***Protokoll (Nr. 2)** über die Anwendung der Grundsätze der Subsidiarität und der Verhältnismäßigkeit.* (n.d.). https://www.parlament.gv.at/PERK/RGES/EU/PROT2/index.shtml

https://www.cvce.eu/de/obj/vertrag_zur_grundung_der_europaischen_wirtschaftsgemeinschaft_rom_25_marz_1957-de-cca6ba28-0bf3-4ce6-8a76-6b0b3252696e.html (03.03.2022)

REFERENCE LIST

Asam, W.H., & Heck, M. (1985). *Subsidiarität und Selbsthilfe*, S. 28

Cooper, I. (2006). The watchdogs of subsidiarity: national parliaments and the logic of arguing in the EU*. JCMS: Journal of Common Market Studies, 44(2), 281–304. https://doi.org/10.1111/j.1468-5965.2006.00623.x, P 283

Fabbrini, F. (2016) The Principle of Subsidiarity. Takis Tridimas & Robert Schütze (eds.), Oxford Principles of EU Law (OUP 2016), Forthcoming, iCourts Working Paper Series No. 66, Available at SSRN: https://ssrn.com/abstract=2781845 or http://dx.doi.org/10.2139/ssrn.2781845, P. 291

Finnis, J. (2016). Subsidiarity's Roots and History: Some observations. *The American Journal of Jurisprudence*, *61*(1), 133–141. https://doi.org/10.1093/ajj/auw006, P. 135

Golub, J. E. (1996). Sovereignty and subsidiarity in EU environmental policy. Political Studies, 44(4), 686–703. https://doi.org/10.1111/j.1467-9248.1996.tb01749.x, P. 690

Lincoln, A., Basler, R. P., Pratt, M. D., & Dunlap, L. A. (1953). The collected works of Abraham Lincoln. The American Historical Review, 59(1), 142. https://doi.org/10.2307/1844696, P. 221

Marcic, R. (1957b). Vom Gesetzesstaat zum Richterstaat. https://doi.org/10.1007/978-3-7091-7871-3, S. 431

Pesch, O. H. (2015). Heinzmann, Richard: Thomas von Aquin: eine Einführung in sein Denken. - Stuttgart u.a.: Kohlhammer, 1994. *Münchener Theologische Zeitschrift*, 47(2), 194–195. https://doi.org/10.5282/mthz/3932, S. 194

Pieper, S. U. (1993). Subsidiaritätsprinzip–Strukturprinzip der Europäischen Union. Deutsches Verwaltungsblatt, 108(13), 705-712. S. 705

Von Gierke, O. F. (1868). Rechtsgeschichte der deutschen Genossenschaft. https://ci.nii.ac.jp/ncid/BA10221677, S. 644

Xiii, P. L., & Xi, P. P. (1931). Die Enzyklika Leos XIII. "Rerum novarum" über die Arbeiterfrage und Enzyklika Pius XI. "Quadragesimo anno" über die gesellschaftliche Ordnung, ihre Wiederherstellung und ihre Vollendung nach dem Heilsplan der Frobotschaft zum 40. Jahrestag des Rundschreiben Leos XIII. "Rerum novarum." http://ci.nii.ac.jp/ncid/BA79439555, S. 21

Die nationalen Parlamente tragen aktiv zur guten Arbeitsweise der Union bei, indem sie. . . *(b) dafür sorgen, dass der Grundsatz der Subsidiarität gemäß den in dem Protokoll über die Anwendung der Grundsätze der Subsidiarität und der Verhältnismäßigkeit vorgesehenen Verfahren beachtet wird*. (n.d.). https://dejure.org/gesetze/EU/12.html

EU-Vertrag, *«Die Organe der Union wenden das Subsidiaritätsprinzip nach dem Protokoll über die Anwendung der Grundsätze der Subsidiarität und der Verhältnismäßigkeit an. Die nationalen Parlamente achten auf die Einhaltung des Subsidiaritätsprinzips nach dem in jenem Protokoll vorgesehenen Verfahren»*. (n.d.). https://dejure.org/gesetze/EU/5.html

Protokoll (Nr. 2) *über die Anwendung der Grundsätze der Subsidiarität und der Verhältnismäßigkeit*. (n.d.). https://www.parlament.gv.at/PERK/RGES/EU/PROT2/index.shtml

https://www.cvce.eu/de/obj/vertrag_zur_grundung_der_europaischen_wirtschaftsgemeinschaft_rom_25_marz_1957-de-cca6ba28-0bf3-4ce6-8a76-6b0b3252696e.html (03.03.2022)

ABSTRACT
SUPPORTING INSTRUMENTS OF THE EUROPEAN UNION FOR RESOLVING CONFLICTS WITHIN THE UNION
ZARGARYAN V.

The European Union, a community consisting of 27 member states with completely different histories, cultures, economies and levels of development, needs certain clear rules of the game that will ensure peaceful coexistence and continuity of coexistence of states gathered under one integration roof.

This article focuses on the principle of subsidiarity in the EU and its role in conflict management.

The purpose of this article is to provide a comprehensive overview of how subsidiarity operates as a mechanism to reduce tensions and promote cooperation between EU member states. The analysis focuses on the historical application of this principle in different political contexts to identify patterns and general trends.

The methodological approach of the article is based on a comprehensive analysis of political decision-making processes at the EU level, taking into account the principle of subsidiarity. By combining qualitative and quantitative research methods, the impact of this principle on conflict identification, prevention and resolution is systematically explored.

It was confirmed that targeted and effective implementation of the principle of subsidiarity in the EU can make a significant contribution to conflict prevention and resolution. Principle of subsidiarity acts as the main tool for conflict management in the EU, plays a central role.

Key words: *European Union, EU, integration, subsidiarity, principle of subsidiarity, subsidiary assistance, self-help, complementarity*

РЕЗЮМЕ
ВСПОМОГАТЕЛЬНЫЕ ИНСТРУМЕНТЫ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА ПО РАЗРЕШЕНИЮ КОНФЛИКТОВ ВНУТРИ СОЮЗА
ЗАРГАРЯН В.

Европейский Союз, сообщество, состоящее из 27 государств-членов с совершенно разной историей, культурой, экономикой и уровнем развития, нуждается в определенных четких правилах игры, которые обеспечат мирное сосуществование и непрерывность сосуществования государств, собравшихся под одной интеграционной крышей.

В данной статье основное внимание уделяется принципу субсидиарности в ЕС и его роли в управлении конфликтами.

Цель этой статьи – предоставить всесторонний обзор того, как субсидиарность действует как механизм ослабления напряженности и развития сотрудничества между государствами-членами ЕС.

Для достижения цели была поставлена задача детально изучить влияние принципа субсидиарности на предотвращение и разрешение разногласий в ЕС. Анализ фокусируется на историческом применении этого принципа в различных политических контекстах с целью выявления закономерностей и общих тенденций.

Методологический подход статьи основан на комплексном анализе процессов принятия политических решений на уровне ЕС с учетом принципа субсидиарности. Сочетая качественные и количественные методы исследования, систематически исследуется влияние этого принципа на выявление, предотвращение и разрешение конфликтов.

Было подтверждено, что целенаправленная и эффективная реализация принципа субсидиарности в ЕС может внести существенный вклад в предотвращение и разрешение конфликтов.

Вывод состоит в том, что принцип субсидиарности выступает в качестве основного инструмента управления конфликтами в ЕС, играя центральную роль. Исследование подчеркивает необходимость точной реализации этого принципа для успешной гармонизации динамики национальных и общественных интересов.

Ключевые слова: *Европейский Союз, ЕС, интеграция, субсидиарность, принцип субсидиарности, субсидиарная помощь, самопомощь, взаимодополняемость.*